ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2022.4-75

Հիմնաբառեր. *կրթություն, գիտություն, բյուջե, ծախս, կառուցվածք*

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

https://orcid.org/0000-0003-2226-6435

Կրթությունը մարդու հիմնարար իրավունքն է և հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գրավականը: Հետևաբար՝ որակյալ կրթության ապահովումը պետք է լինի յուրաքանչյուր պետության առաջնահերթությունը: Թե որքանով է այս կամ այն պետությունը կարևորում կրթությունը՝ մյուս ոլորտների համեմատ, երևում է ընդհանուր բյուջետային ծախսերից կամ ՀՆԱ-ի նկատմամբ ոլորտին ուղղվող հատկացումներից:

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ կրթությանն ուղղվող միջոցները, դրանց տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային հատկացումներում և ՀՆԱ-ի նկատմամբ, կատարվել համեմատություններ այլ երկրների համանման ցուցանիշների հետ: Համեմատությունները ցույց են տվել, որ թեև կրթությանը միտված ծախսերը քանակապես աճում են, սակայն դեռևս շատ ցածր են ինչպես աշխարհի, այնպես էլ եկամտի միևնույն մակարդակ ունեցող երկրների միջինից և ամենացածրը՝ տարածաշրջանում ու ԵԱՏՄ շրջանակում: ՀՀ կրթության ծախսերի գերակշիռ մասն ավանդաբար ուղղվում է հանրակրթությանը (60-70%), այնուհետև բարձրագույն (6-9%), նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական (7-8%), ինչպես նաև արտադպրոցական (3%) կրթությանը:

Որակյալ կրթությունը պետության երկարաժամկետ զարգացման կարևոր հիմնայունն է և մարդու հիմնարար իրավունքը: Գիտությունը, տնտեսությունը, առողջապահությունը և առհասարակ մարդ-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կրթությանը հատկացվող պետական ծախսերը ՀՀ-ում[1]

	2020 թ.	2021 թ.	2022 թ. ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	*6,181.7*	*6982,8*	*7,869.4*
ՀՀ պետական բյուջե, մլն դրամ	1,894,647.1	1,850,877.5	2,026,121.6
ՀՀ ԿԳՄՄՆ բյուջե, մլն դրամ	170,900.6	174,809.45	226,801,2
ԿԳՄՄՆ մասնաբաժինը ՀՆԱ-ում, %	2.76	2.5	2.88
ԿԳՄՄՆ մասնաբաժինը ՀՀ պետական բյուջեում, %	9.02	9.44	11.19

կային գործունեության ամեն մի ոլորտ ածանցվում է կրթությունից: Ուստի պետության պարտականությունն է ապահովել հավասարապես մատչելի և որակյալ կրթություն: Այս տեսանկյունից, կարևոր է ուսումնասիրել կրթության համար կատարվող ծախսերը և դրանց կառուցվածքը:

ԿԳՄՄՆ 2021 թ. բյուջետային ծախսերը կազմել են 174.8 մլրդ դրամ (աղյուսակ 1), որը թեև նախորդ տարվանից ավելի է շուրջ 4 մլրդ դրամով, սակայն ՀՆԱ-ի հետ հարաբերակցությամբ նվազել է 0,26 տոկոսային կետով: ԿԳՄՄՆ 2022 թ. հաստատված բյուջեն 226,8 մլրդ դրամ է, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 52 մլրդ դրամով կամ 29,7%-ով, իսկ ՀՆԱ-ի հետ հարաբերակցությամբ՝ 0,33 տոկոսային կետով՝ հասնելով 2,88%-ի: Ընդ որում, այդ 2,88%-ը ներառում է ոչ միայն կրթության, այլև ԿԳՄՄՆ ենթակայության մյուս ոլորտներին՝ գիտությանը, մշակույթին, սպորտին, երիտասարդությանը և սփյուռքին հատկացվող միջոցները: Փաստացի, կրթության ծախսեր - ՀՆԱ հարաբերակցությունը շատ ավելի փոքր է: Պետք է նշել սակայն, որ դեռևս ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում էր կրթության ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ 2021 թ. հասցնել 3,3, իսկ 2025 թ.՝ շուրջ 3,7%-ի[2]: Մինչդեռ նշվածը թերակատարվել է՝ դեռևս 2017 թ.-ից սկսած (0,4 տոկոսային կետով): Վերջին տարիների, մասնավորա-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Կրթությանը հատկացվող պետական ծախսերը ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրներում[3]

	2005		2015		2019		2020	
	ՀՆԱ %	Կառ. ծախս. %	ՀՆԱ %	Կառ. ծախս. %	ՀՆԱ %	Կառ. ծախս. %	ՀՆԱ %	Կառ. ծախս. %
ԵԱՏՄ երկրներ								
Հայաստան	**2.71**	**13.65**	**2.81**	**10.66**	**2.56**	**10.01**	**2.71**	**8.83**
Ռուսաստան	3.77	11.95	3.83	10.87	3.52		3.73	
Ղրղզստան	4.87	16.77	5.99	15.72	5.37	16.47	6.21	
Բելառուս	5.87	12.62	4.79	11.46	4.98	13.33	4.95	12.78
Ղազախստան	2.26	10.29	2.79	12.19	2.86	14.11	4.45	
Տարածաշրջանի երկրներ								
Թուրքիա	2.85	8.02	4.32		4.45	12.43	3.36	
Վրաստան	2.48	11.18	3.16	13.49	3.81	13.34	3.85	
Իրան	4.06	21.90	2.80	18.57	3.66	21.25	3.59	23.14
Ադրբեջան	2.97	13.22	2.95	7.63	2.68	8.29	4.33	10.50
Միջին - բարձր եկամուտ ունեցող	4.04	13.64	4.21	14.29	3.91	14.13	4.42	15.05
Աշխարհ	**3.98**	**13.85**	**4.43**	**14.00**	**3.71**	**15.60**		**16.21**

[1] Կազմել է հեղինակը՝ ՄԺԾԾ 2023-2025 թթ. տվյալների հիման վրա:
[2] ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N442-ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=89968
[3] Կազմել է հեղինակը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա:

պես՝ ոչ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում, ոչ Հայաստանի վերափոխման ռազմավարություն-2050-ում, ոչ էլ ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրում որևէ նման թիրախ սահմանված չէ: Թեև վերջին փաստաթղթի «Կրթության համակարգի արդի վիճակը և հիմնախնդիրները բաժնում» ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծախսերի ցածր հատկացումների վերաբերյալ ակնարկ կա, բայց դրանց ավելացման մասին որևէ դրույթ առկա չէ: Մինչդեռ եթե համեմատենք ՀՀ կրթության ծախսերի և ՀՆԱ հարաբերակցությունն աշխարհի միջինի, միջին-բարձր եկամուտների խմբի միջինի (Հայաստանը այս եկամտային խմբում է), ԵԱՏՄ և տարածաշրջանային երկրների հետ (աղյուսակ 2), ապա կտեսնենք, որ դա ամենացածրն է: Պատկերը գրեթե նույնն է ըստ կրթության ծախսեր-կառավարության ընդհանուր ծախսեր հարաբերակցության ցուցանիշի:

ԵԱՏՄ երկրներից կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությամբ առաջատարները Ղրղզստանն ու Բելառուսն են, որոնց ցուցանիշները գերազանցում են աշխարհի միջինը, իսկ տարածաշրջանային երկրներից՝ Իրանն ու Թուրքիան: Կարևոր է ընդգծել, որ Ադրբեջանը հատկապես վերջին տարում շեշտակի ավելացրել է կրթության համար կատարվող ծախսերը՝ դրանք հասցնելով աշխարհի միջին ցուցանիշին:

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա ՀՆԱ-ի և բյուջետային ծախսերի նկատմամբ կրթությանն ուղղվող ցածր հատկացումները վկայում են կրթությանն առաջնայնություն չտալու մասին: Իսկ մարդկային կապիտալի զարգացումը, աշխատողի արտադրողականության մակարդակի բարձրացումն ուղղակիորեն կապված են կրթության հետ:

Քանակական առումով, նախատեսվում է ԿԳՄՍՆ բյուջետային հատկացումների ավելացում (գծապատկեր 1), ինչը, սակայն, էապես չի փոխի բյուջետային հատկացումների կառուցվածքային համամասնությունը և ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը:

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ հատկացումները հիմնականում ուղղվելու են դեպի գիտության ոլորտ. նախատեսվում է գիտությանն ուղղվող միջոցները 2025 թ., 2021 թ. համեմատությամբ, ավելացնել 4 անգամ՝ 15,1 մլրդ դրամից հասցնելով 61,5 մլրդ դրամի: Այլ ոլորտների, հատկապես՝ կրթությանն ուղղվող հատկացումները ևս քանակապես աճելու են, բայց թե որքանով դրանք կբավականացնեն մինչև 2030 թ. կրթության զարգացման նպատակների իրականացմանը, դժվար է ասել:

Ինչ վերաբերում է բուն կրթության ոլորտի ծախսերին, ապա, ավանդաբար,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԿԳՄՍՆ փաստացի և նախատեսվող բյուջետային հատկացումները 2021-2025 թթ., մլրդ դրամ[4]

[4] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ՄԺԾԾ 2023-2025 թթ. տվյալների հիման վրա:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կրթական ծախսերի կառուցվածքը 2021-2025 թթ., %

դրանց գերակշիռ մասն ուղղվել է հանրակրթությանը (գծապատկեր 2):

Ինչպես նկատելի է գծապատկեր 2-ից, 2021 թ. հանրակրթությանն ուղղվել է ողջ կրթական ծախսերի շուրջ 72%-ը, սակայն նկատվում է նաև դրանց տեսակարար կշռի տարեցտարի նվազման միտում՝ 2025 թ.-ին հասցնելով 58%-ի, թեև քանակապես որոշակի չափով նույնիսկ աճում են: Միաժամանակ, աճ է նախատեսվում կրթության որակի ապահովման ծախսերում, որոնք, բացի ուսուցման և կրթական համակարգի բարեփոխումներից, կրթության մեթոդական և բովանդակային սպասարկումից, ներառում են նաև ուսուցիչների ատեստավորման համակարգի ներդրման և վերապատրաստման գործընթացները: Վերջին երկուսի տեսակարար կշիռը բավական բարձր է կրթության որակի ապահովման ծախսերում, և դրանք ևս վերաբերում են հանրակրթությանը: Այսինքն՝ մի կողմից նվազում է հանրակրթությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը, մյուս կողմից՝ ավելանում կրթության որակի ապահովման մասնաբաժինը, որի մեջ էլ, իրենց հերթին, էական կշիռ ունեն հանրակրթական ծրագրերի ուսուցիչների ատեստավորման հատկացումները:

«Ապահով դպրոց» ծրագրին ուղղվող միջոցները ևս նախատեսվում է ավելացնել: Ծրագիրը ներառում է դպրոցների համալիր անվտանգության ապահովումը, կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավումը, մարզադպրոցների կառուցումը և վերակառուցումը, ինչպես նաև դպրոցական երեխաներին սննդով ապահովումը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծախսերն աճման միտում են ցուցաբերում՝ հասնելով ողջ կրթական ծախսերի 7-8%-ին: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ուսանողների թվի նախատեսվող ավելացմամբ, որի արդյունքում մեծանալու են ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացումները: Շենքային պայմանների բարելավման ծախսերը ևս աճելու են, ինչն անկասկած դրական է: Սակայն, կրթության որակի բարելավման բովանդակային ծրագրեր և այդ ուղղությամբ շոշափելի ծախսեր գրե-

[5] «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/4013/about

[6] Մովսիսյան Շուշան (2022). Հայաստանի գիտությունը՝ թվերով. Ամբերդ, (1 (14)), 46-51, DOI: 10.52174/2579-2989_2022.1-46

թե չեն նախատեսվում:

Արտադպրոցական կրթության ծախսերում ևս որոշակի աճ նախանշվում է, սակայն, կառուցվածքային առումով, տեսակարար կշռի փոփոխություն գրեթե չի լինելու:

2022 թ.-ից սկսած՝ բարձրագույն կրթության բյուջետային հատկացումների տեսակարար կշիռը կնվազի՝ 2021 թ. 9,1%-ից 2025 թ. հասնելով 6,3%-ի: Իհարկե, գումարային առումով, նվազում չի նախատեսվում, և 2021 թ. ցուցանիշն էլ մասամբ պայմանավորված է ռազմական դրության հետևանքով սովորողների ուսման վարձի փոխհատուցմամբ: Սակայն, պետք է նշել, որ ոլորտում նոր նախաձեռնությունների պակաս է նկատվում, այնինչ մինչև 2030 թ. կրթության զարգացման ծրագրում ասում է, որ հայաստանյան առնվազն 4 համալսարան պետք է ընդգրկվի աշխարհի լավագույն 500-ի ցուցակում[5], բայց թե ինչպես՝ չի ասվում: Հայաստանյան առաջատար համալսարաններն անգամ չունեն Elsevier գիտական էլեկտրոնային բազային հասանելիություն, որը թույլ տար օգտվել լավագույն գիտական ամսագրերի հրապարակումներից: Մինչդեռ, օրինակ, հարևան Վրաստանի կրթական և գիտական քաղաքականության փոփոխության շնորհիվ՝ վրացական համալսարաններին և գիտական կազմակերպություններին հասանելիություն է տրվել վերոնշյալ էլեկտրոնային հարթակից օգտվելու համար:

Այսպիսով՝ ՀՀ կրթական ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկնում հանրակրթությանը, որին հաջորդում է բարձրագույն կրթությունը՝ շատ ավելի փոքր մասնաբաժնով: Առաջիկա տարիներին երկուսի բաժինն էլ նվազման միտում է ցուցաբերելու: Նախնական և միջին մասնագիտական կրթությանն ուղղվող ծախսերն աճելու են և գերազանցելու բարձրագույն կրթությանն ուղղվող միջոցները:

Արտադպրոցական կրթության հատկացումների տեսակարար կշիռը, որը, ավանդաբար, ամենափոքրն է, ևս աճելու է: Ամփոփելով կարող ենք վկայել, որ կրթությանն ուղղվող բյուջետային ծախսերը թեև գումարային առումով աճում են, սակայն դեռևս հեռու են աշխարհի միջինից, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների միջինից և ամենացածրն են ինչպես տարածաշրջանի, այնպես էլ ԵԱՏՄ երկրների համեմատությամբ: Մինչդեռ երկրները միմյանց հետ մրցում են նաև մարդկային կապիտալով և արտադրողականությամբ, որոնց հետ կրթությունը սերտորեն կապված է: Ուստի մրցակցությունից դուրս չհայտնվելու համար անհրաժեշտ է ոչ միայն քանակական, այլև ՀՆԱ-ի նկատմամբ կրթական հատկացումների համամասնական աճ՝ մոտեցնելով այն աշխարհի միջին ցուցանիշին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ, https://escs.am/am/news/11962
2. Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, https://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/
3. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N442-ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
4. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/4013/about
5. Մովսիսյան Շուշան (2022). Հայաստանի գիտությունը՝ թվերով. Ամբերդ, (1 (14)), 46-51, DOI: 10.52174/2579-2989_2022.1-46:
6. UNESCO https://www.unesco.org/en
7. World Bank https://www.worldbank.org/en/home

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», аспирант, АГЭУ

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

ГОСУДАРСТВЕННЫЕ РАСХОДЫ НА ОБРАЗОВАНИЕ И ИХ СТРУКТУРА В РА

Образование является одним из основных прав человека и гарантией социального и экономического развития общества. Поэтому обеспечение качественного образования должно быть приоритетом любого государства. Важность образования для любого правительства проявляется в ассигнованиях на сектор в общих расходах бюджета или в доле ВВП. Сравнение показало, что, хотя расходы на образование количественно увеличиваются, они все еще значительно ниже среднемировых, средних показателей стран с таким же уровнем доходов и являются самыми низкими в регионе и в пределах ЕАЭС. Наибольшая часть расходов на образование в РА традиционно направляется на общее образование (60-70%), включая начальное, среднее, дошкольное образование, затем высшее образование (6-9%), профессиональное образование (7-8%), а также внешкольное образование (3%).

Ключевые слова: *образование, наука, бюджет, расходы, структура*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at «Amberd» Research Center, PhD student, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

GOVERNMENT EXPENDITURE ON EDUCATION AND ITS STRUCTURE IN THE RA

Education is a fundamental human right and a guarantee of society's social and economic development. Therefore, the provision of quality education should be the priority of any state. The importance of education for any government is shown by the allocations to the sector in the total budget expenditure or by the ratio of GDP. In the paper, the resources allocated to RA education, its ratio in the total budget allocations, and GDP, have been studied, and comparisons have been made with similar indicators of other countries. Comparisons have shown that although expenditures on education are increasing quantitatively, they are still far below the world average, the average of countries of the same income level, and are the lowest in the region and within the EAEU. The largest part of RA education expenses is traditionally directed to general education (60-70%), including primary, secondary, preschool education, then higher education (6-9%), vocational education (7-8%), as well as extracurricular education (3%).

Keywords: *education, science, budget, expenditure, structure*